Արեւմտեան Եւրոպայում ազատորդիներին համապատասխանում են զինակիրները, որոնք 14-15 տարեկանից հմտանում էին ռազմական գործի մէջ: Մի քանի տարի ծառայելուց յետոյ, եթէ տուեալ զինակիրը աչքի էր ընկնում քաջութեամբ, նա իր սենեօրից խնդրում էր ասպետի կոչում շնորհել իրեն[38]:

Այսպիսով, Բագրատունեաց թագաւորութեան հռչակումից յետոյ ազատների դասը Հայաստանում Թ-ԺԱ դարերում ձեռք էր բերել որակական նոր յատկանիշներ, յստակ կանոնակարգուել էին ազատների պարտականութիւններն ու իրաւունքները: Ունենալով գործունէութեան կանոնակարգուած, համընդհանուր ընդունելութիւն գտած սկզբունքներ, հանդիսանալով բարձրաստիճան զինուորականներ՝ ազատները, յատկապէս՝ նրա վերին շերտը, առանձնանում էին զինուորականութեան ներսում եւ հասարակութեան մէջ՝ որպէս ինքնամփոփ, փակ հասարակական դաս:

38 **Д. Т. Денисон**, *История конницы*, militera.lib.ru/h/denison/index.html. Ж. Ж. Руа, История рыцарства, М., 2004, ст. 49.

ՍՄԲԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Կարէն Մաթեւոսեան

Անիի Բագրատունեաց թագաւորութեան Ժ դարի վերջերի եւ ԺԱ դարի սկզբների զինուորական գործիչ եւ եկեղեցաշինարար Սմբատ Մագիստրոսի վերաբերեալ երկու փաստ է յայտնի: Առաջինն այն է, որ նա 998 թ. Ծմբոյ գիւղի մօտ տեղի ունեցած ճակատամարտում մահմեդականների դէմ դուրս եկած քրիստոնէական միացեալ բանակի կազմում երկու այլ զօրավարների՝ Վահրամ Պահլաւունու եւ Աշոտ մարզպանի հետ գլխաւորել է Անիի թագաւորութեան 6000-անոց զօրամասը, եւ երկրորդը, որ 1010 թ. կառուցել է Անիի մերձակայ Բագնայրի վանքը:

Ո՞ր տոհմից էր սերում Սմբատ Մագիստրոսը: Ցայժմ եղած պատմագրական ողջ գրականութեան մէջ նա համարւում է սպարապետ Վահրամ Պահլաւունու որդին: Սակայն սկզբնաղբիւրների քննութիւնն այլ եզրակացութեան է յանգեցնում. պարզւում է, որ Վահրամ Պահլաւունին Սմբատ անունով որդի չի ունեցել եւ Սմբատ Մագիստրոսը միանգամայն այլ իշխանական տան ներկայացուցիչ է: Մանրամասնենք փաստերին:

1004 թուականին իր Տիեզերական պատմութիւնը *աւարտած Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը գրում է այն մասին, որ Մամլան ամիրան հսկայական բանակով յարձակուել է Դաւիթ կուրապաղատի իշխանութեան վրայ, իսկ վերջինս դիմել է Հայոց եւ Վրաց թագաւորներին՝ օգնութեան խնդրանքով: Գագիկ Ա Բագրատունին (990-1020)*[1] *յատկացրել է վեց հազար զինուոր, որոնց գլխաւորում էին երեք զօրավարներ: Այս հատուածը Ասողիկի Պատմութեան հրատարակութիւնից մէջբերելուց առաջ նշենք, որ այստեղ հետագայում ընդմիջարկութիւն է կատարուել, որը մասամբ փոխել է դրա բովանդակութիւնը:*

Հրատարակութեան մէջ կարդում ենք. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ ՁՌ (6000) զընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ զՄարմաշէն եւ զԲրգներն շինեաց, եւ Սմբատայ մաժիստռոսի, որդւոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»[2]: *Տողատակում հրատարակիչը նշում է, որ օգտագործուած օրինակներից մէկում եղել է այլ տարբերակ. «... իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ. եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ. եւ մարզպանին Աշոտոյ Պալհաւունւոյ, որ զՄարմաշէն շինեաց. որ զԲրգներն շինեաց»*[3]:

Այստեղ ընդմիջարկութեան գոյութեան մասին կռահել է Հ. Ներսէս Ակինեանը: Նա գրում է. «Ինձի կը թուի թէ Ասողիկի բնագիրը ունեցած է լուսանցագրութիւններ, որոնք սխալմամբ բնագրին մէջ առնուած են. կ'առաջարկեմ կարդալ. «... որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ զՄարմաշէն շինեաց, եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ, որ զԲրգներն շինեաց, եւ մարզպանին Աշոտոյ»[4]:

1 Ըստ Կ. Իւզբաշեանի՝ Գագիկ Ա-ը մահացել է 1017 թ. (**К. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, М., 1988, ст. 156):

2 Ստեփանոսի Տարօնեցւոյ *Պատմութիւն տիեզերական*, աշխ. Ստ. Մալխասեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 270

3 *Նոյն տեղում*

4 Ն. Ակինեան, *Ներսէս Լամբրոնացի*, Վիեննա, 1956, էջ 358

© National Library of Armenia

Մատենադարանում պահվող Ասողիկի Պատմութեան հնագոյն ձեռագիրը (ՄՄ ձեռ. թիւ 2865)[5], որը ԺԳ դարից է, վերջնականապէս պարզում է հարցը: Այնտեղ հեղինակային բնագրի հարեւանութեամբ իրօք տեսնում ենք հետագայի մի լուսանցագիր յաւելում Մարմաշէնի եւ Բագնայրի մասին, որը յաջորդ գրիչները ներմուծել են բնագրի մէջ եւ չփոթի առիթ ստեղծել: Ահաւասիկ իրականում ինչ է գրել Ասողիկը. «Եւ Գագկայ յամենայն զաւրացն Հայոց հատեալ զգունդ վեցհազար զընտիր ընտիր վառելոցն, գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ, եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»[6]: Այս հատուածից աջ, լուսանցքում, Վահրամի անուան հաւասարութեամբ սկսւում է եօթ կարճ տողերից բաղկացած մանրատառ յաւելումը. «Պալհաւունոյ որ զՄարմաշէն շինեց: Որ զԲգներն շինեց»[7] (տե՛ս լուսանկարը): Այս լուսանցագիր յաւելում կատարողը ցանկացել է աւելացնել իրեն յայտնի փաստերն այն մասին, որ Վահրամ Պահլաւունին Մարմաշէնն է կառուցել, իսկ Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը, այդ պատճառով երկու տուեալն առանձնացրել է վերջակէտով: Բայց հետագայի ընդօրինակողներն այդ տողերը, որպէս միասնական միտք, ներմուծել են բնագրի մէջ՝ մի դէպքում Վահրամի հօր անունից յետոյ (ինչպէս Ասողիկի հրատարակութեան մէջ է), միւս դէպքում՝ Աշոտ մարզպանի անունից յետոյ (ինչպէս հրատարակութեան տողատակում նշուած օրինակում):

Շատ կարեւոր հանգամանք է այստեղ նաեւ այն, որ Ասողիկի բնագրում, փաստօրէն, չի օգտագործուած Պահլաւունի տոհմանունը: Այն նշուած է հետագայի յաւելման մէջ: Գրիգոր Մագիստրոս Պահլաւունուն նուիրուած մենագրութեան մէջ Լ. Խաչերեանը, հանգամանօրէն քննելով Պահլաւունիների մասին վաղ յիշատակութիւնները եւ նրանց իսկ թողած բոլոր արձանագրութիւնները, յանգում է այն եզրակացութեան, որ նրանք բաւական ուշ են որդեգրել այդ տոհմանունը: Հեղինակի համար առեղծուած է մնում, թէ ինչպէս է, որ 1004 թ. իր Պատմութիւնն աւարտած Ասողիկը նշել է Պահլաւունի տոհմանունը, եւ ակամայ դա համարում է այդ անուան ամենավաղ յիշատակութիւնը[8]: Ինչպէս տեսնում ենք, Ասողիկի Պատմութեան հնագոյն ձեռագիրը պարզութիւն է մտցնում նաեւ Պահլաւունեաց տոհմաբանութեանն առնչուող այս էական հարցում:

Հիմա տեսնենք, թէ կարո՞ղ էր արդեօք Սմբատ Մագիստրոսը Վահրամ Պահլաւունու որդին լինել: Ասողիկը նշում է, որ Հայոց բանակը ղեկավարել են երեք հոգի՝

Գրիգորի որդի՝ իշխանաց իշխան Վահրամը.

Վահրամի որդի՝ Սմբատ Մագիստրոսը.

Աշոտ մարզպանը:

Եթէ Սմբատը Վահրամ Պահլաւունու որդին լինէր[9], պատմիչը նրա անունը չէր

8 Լ. Խաչերեան, *Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս*, Լոս Անճելըս, 1987, էջ 30

9 Վ. Վարդանեանը, լիովին համոզուած լինելով, որ Սմբատ Մագիստրոսը Վահրամ Պահլաւունու որդին է, Ասողիկի *Պատմութեան* այդ հատուածից ընդհանրապէս հա-նել է երկրորդ անգամ նշուած *Վահրամ* անունը եւ հատուածը թարգմանել հետեւեալ կերպ. «Գագիկը Հայոց զօրքից առանձնացնում է (զո) վեց հազար ամենաընտիր եւ զինավառ մի գունդ, յանձնում Մարմաշէնն ու Բրգները կառուցող Գրիգոր

կրկնի, այլ կը նշէր իշխանաց իշխան Վահրամը եւ նրա որդին՝ Սմբատ Մագիստրոսը: Բայց պատմիչը լաւ էր ճանաչում իր ժամանակակիցներին: Ծմբոյի ճակատամարտի մանրամասները նկարագրելով՝ նա նշում է. քանի որ Հայոց եւ Վրաց զօրաբանակները թագաւորներ չէին գլխաւորում, ամէն տոհմ մարտի էր նետւում ինքնուրոյն. «Իսկ զօրն Հայոց եւ Վրաց, զի ոչ թագաւոր զոք ունէին... իւրաքանչիւրքն ըստ տոհմից եւ աւագութեան գնդից դիմէին, առիւծաբար մռնչելով՝ յանտառացեալ բազմութիւն բանակին Պարսից»[10]: Սա եւս ցոյց է տալիս, որ ճակատամարտի զօրահրամանատարներին թուարկելիս պատմիչը տարբերակել է նրանց ըստ տոհմերի:

Վիմագիր եւ մատենագրական աղբիւրներում յիշատակւում են Վահրամ Պահլաւունու երկու որդիները՝ Գրիգորը եւ Ապուղամրը: Գրիգորը, հաւանաբար աւագն էր, քանի որ պապի անունն էր կրում: Յայտնի է, որ նա ծանր հիւանդութիւն ունէր: Ապուղամրը 1031 թ. Անիի Առաքելոց եկեղեցուն նուիրատուութիւն է կատարել եղբօր առողջութեան եւ երկարակեցութեան համար («վասն եղբաւր իմ Գրիգորոյ առողջութեան եւ կենաց յերկարութեան»)[11]: Բայց Ապուղամրը Գրիգորից աւելի վաղ է մահացել՝ դատելով Վահրամ Պահլաւունու՝ 1031-1033 թթ. ժամանակա-

Պահլաւունու որդի իշխանաց իշխան Վահրամի եւ նրա որդի Սմբատ մագիստրոսի ձեռքը, ապա նաեւ Աշոտ մարզպանի...» (Ստեփանոս Ասողիկ Տարօնեցի, *Տիեզերական պատմութիւն*, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վ. Վարդանեանի, Եր., 2000, էջ 331): Աւելացուել են բնագրում չեղած *նրա որդի* բառերը, միեւնոյն ժամանակ ստացւում է, որ Մարմաշէնն ու Բագնայրը Վահրամի հայր Գրիգորն է կառուցել:

10 Ստեփանոսի Տարօնեցւոյ *Պատմութիւն*, էջ 272-273

11 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. Ա, կազմեց Ց. Օրբէլի, Եր., 1966, էջ 12:

միջոցին գրած մի արձանագրութիւնից[12]: Հ. Ն. Ակինեանը, Սմբատին անդրադառնալով, գրում է. «Վահրամ, որ յիշած է իր արձանագրութիւններու մէջ իր եղբայրներու եւ զաւակներու անունները, խօսք չէ ըրած ամենեւին Սմբատիս մասին»[13]: Սակայն աւանդոյթի ուժն այնքան մեծ է եղել, որ այս կարեւոր դիտարկումն անելով հանդերձ՝ նա Սմբատին համարել է Վահրամ Պահլաւունու որդի:

Ուսումնասիրողները, ցաւօք, աչքաթող են արել եւս մի կարեւոր հանգամանք: Յայտնի է, որ Վահրամ Պահլաւունին եւ իր որդի Գրիգորը զոհուեցին՝ մասնակցելով 1045 թ. բիւզանդացիների՝ Դուինի ամիրայի դէմ կատարած արշաւանքի ժամանակ: Վահրամն այդ պահին տարիքն առած մարդ էր (նրա տարիքի մասին ուղղակի վկայութիւններ չեն պահպանուել): Յայտնի է, որ Բագրատունեաց պետութեան խոր ճգնաժամի տարիներին՝ 1041-1045 թթ., նա Անիում ամենագործուն քաղաքական դերակատարներից մէկն էր: Բայց եթէ անգամ ենթադրենք, թէ իր մահուան ժամանակ նա ութսուն տարեկան էր, ինչպէս Կ. Կոստանեանցն է գրում. «1047-ին պատերազմի մէջ մեռաւ... ութսունամեայ ծերունին Վահրամ»[14], 1045-ից 80 տարի հետ գնալով՝ կը գտնենք նրա ծննդեան թուականը՝ 965, եւ պարզ կը լինի, որ Ծմբոյի ճակատամարտի ժամանակ՝ 998 թուականին, նա 33 տարեկան էր: Մօտաւոր ելակէտ ունեցող այս հաշուարկի մէջ մէկ-երկու տարուայ տեղաշարժը, ա-

12 *Նոյն տեղում*, էջ 32. Վ. Վարդանեան, *Պահլաւունիները Հայոց պետականութեան եւ հոգեւոր անաղարտութեան պահապաններ*, Եր., 2008, էջ 54

13 Ն. Ակինեան, *նշ. աշխ.*, էջ 358: Նկատենք, որ *Սմբատ* անունն ընդհանրապէս չի հանդիպում Պահլաւունիների տոհմում:

14 *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, բնագիրն յառաջաբանով եւ ծանօթագրութիւններով Կ. Կոստանեանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 292

© National Library of Armenia

ռաջ կամ յետ, չի կարող էական նշանակութիւն ունենալ: Իրողութիւնն այն է, որ Ծմբոյի ճակատամարտի ժամանակ Վահրամ իշխանաց իշխանն այնքան երիտասարդ էր, որ չէր կարող զօրավարութեան տարիքի, առաւել եւս՝ մագիստրոսի պատուաստիճանի հասած որդի ունենալ:

Վահրամ Պահլաւունու կենսագրութեան մէջ նրա կարծեցեալ Սմբատ որդու մասին էջը պէտք է փակուած համարել եւ փորձել իրական տեղեկութիւններ գտնել Սմբատ Մագիստրոսի մասին: Մեր համոզմամբ, վերջինս նուազագոյնը Վահրամ Պահլաւունու սերնդակիցն էր, իսկ աւելի հաւանական է, որ աւելի տարեց մարդ էր՝ դատելով Ծմբոյի ճակատամարտի ժամանակ նրա մագիստրոս լինելու հանգամանքից:

Ընդհանրապէս առանձին քննութեան նիւթ է այն, թէ ինչպէս Ժ դարի վերջերին եւ ԺԱ դարի սկզբներին Հայաստանում այդքան շատացան բիւզանդական տարբեր տիտղոսներ ու պատուաստիճաններ կրողները, այդ թւում՝ մագիստրոսութեան պատիւ ստացողները[15]: Արզականի 1001 թ. մի արձանագրութեան մէջ մագիստրոս պատուաստիճանով է յիշւում Հասանի որդի Գրիգոր (Ապիրատ) իշխանը, որը մի քանի տարի անց կառուցեց Կեչառիսի վանքը, իսկ չինարարական արձանագրութեան մէջ իրեն անուանում է Գրիգոր Մագիստրոս[16]: Ասողիկի վկայութեամբ, 1001 թուականին Հայաստանի սահմանները հասած բիւզանդական Բարսեղ (Վասիլ) Բ կայսրը մագիստրոսութեան պատիւ է շնորհել հայ եւ վրացի մի քանի իշխանաւորների[17]: Սմբատը, ինչպէս տեսանք, մագիստրոսի պատուաստիճանով է յիշատակւում արդէն 998 թուականին:

Այժմ անդրադառնանք Սմբատ Մագիստրոսի մասին երկրորդ հիմնական տուեալին, որը հաղորդում է Սամուէլ Անեցին: Ժամանակագրական աղիւսակի Հայոց ՆԾԹ (1010) թուականի դիմաց նա գրում է. «Սմբատ Մագիստրոսն շինեաց զհրեշտակաբնակ եւ զփափագատենչ վանքն՝ որ Բագնայր յորջորջիւր՝ ժողովեալ աստուածայնոց արանց»[18]: Հարկ է նշել, որ Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան 1893 թ. վաղարշապատեան հրատարակութեան մէջ իրադարձութիւնների մեծ մասի վերաբերեալ նշուած է միայն Փրկչական թուականը, որն այդ երկում երկու տարով առաջ է այժմ գործող թուականից[19]: Ըստ այդմ՝ յիշեալ հրատարակութիւնից օգտուողները Բագնայրի վանքի կառուցումը նշում են 1012 թուականին, մինչդեռ ճիշտ է Հայոց թուականը, որը տուեալ դէպքում ՆԾԹ (1010) թուականն է: Այդպէս են իրողութիւնն ընդունել նաեւ միջնադարեան հեղինակները: Սամուէլ Անեցուց օգտուելով՝ Սմբատ Մագիստրոսի ձեռամբ Բագնայրի վանքի կառուցման մասին յայտնում են Յովհաննէս Սարկաւագի Ժամանակագրութեան շարունակողը[20], պատմիչներ Կիրակոս Գանձակեցին[21] եւ Մխիթար Այրիվանեցին[22]:

Բագնայրի վանքը Անիի հետ սերտօրէն կապուած խոշոր հոգեւոր մշակութային կենտրոն էր, որը ԺԱ-ԺԳ դարերում ծաղկում ապրեց[23]: Հնագոյն եկեղեցին Ս. Աստուածածինն է, որն էլ պէտք է Սմբատ Մագիստրոսի ձեռակերտը լինի: Հետագայում այստեղ առաջացել է վանական խոշոր համալիր:

Արդեո՞ք Բագնայրի վանքը տեղեկութիւններ պահպանել է Սմբատ Մագիստրոսի տոհմակիցների վերաբերեալ: Ցաւօք, վանքի ամենահին թուակիր արձանագրութիւնը ՆՂԱՑ (1042) թուականից է: Սակայն պահպանուել է մի անթուական արձանագրութիւն, որն աւելի վաղ է գրուած: Այստեղ Իշխան Վասակ Պահլաւունու դուստր (Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու քոյր) Սեդան յայտնում է վանքին կատարած նուիրատուութեան մասին, որն արել է ի յիշատակ իր հօր՝ Քրիստոսի զօրական Վասակի: Ցայտնի է, որ մահմեդական հրոսակների դէմ կռուի ելած Վասակը սպանուել է 1021 թ., հետեւաբար Սեդայի արձանագրութիւնը գրուել է այդ կամ յաջորդ թուականին, հօր կորստեան անմիջական տպաւորութեան տակ:

Իսկ հիմա տեսնենք, թէ Բագնայրում ինչ կարգավիճակով է հանդէս գալիս Վասակ Պահլաւունու դուստրը: Նա գրում է. «Ես Սեդա տիկնաց տիկին... զուգակից Վահրամայ իշխանաց իշխանի, որդւոյ Աշոտոյ իշխանաց իշխանի...»[24]: Այսինքն՝ նա հարս էր եկել մի իշխանական տուն, որի աւագ ներկայացուցիչը Աշոտ իշխանաց իշխանն էր, իսկ կրտսերը՝ իր ամուսին Վահրամը: Նկատենք, որ այս արձանագրութիւնը գրուել է վանքի հիմնադրումից ընդամէնը մէկ տասնամեակ անց, եւ կարելի է ենթադրել, որ նրա մէջ յիշուած անձինք Սմբատ Մագիստրոսի տոհմակիցներն են: Մասնաւորապէս՝ չի բացառւում, որ Վահրամ իշխանաց իշխանը, Աշոտ իշխանաց իշխանի աւագ որդին լինելով[25], ստացել է իր Վահրամ պապի անունը, որը կարող է նոյնանալ Սմբատ Մագիստրոսի հօր հետ: Այլ կերպ ասած՝ հնարաւոր է, որ Բագնայրի հիմնադիր Վահրամի որդի Սմբատ Մագիստրոսը եւ Աշոտ իշխանաց իշխանը եղբայրներ էին: Այդ դէպքում միանգամայն հասկանալի կը դառնայ, թէ ինչու է այս տան հարսը՝ Վասակ Պահլաւունու դուստրը, նուիրատուութիւն արել Բագնայրին: Ցիշենք, որ այս շրջանում այլ իշխանական տներ նոյնպէս վանքեր ու եկեղեցիներ էին հիմնում (Պահլաւունիների եկեղեցիները Անիում, Վահրամ Պահլաւունու հիմնած Մարմաշէնի վանքը, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի հիմնած Կեչառիսի վանքը, նրա եղբօր՝ Գէորգի հովանաւորած Հաւուց Թառի վանքը եւ

15 *Մագիստրոսը* բիւզանդական արքունիքի կողմից օտարերկրացիներին տրուող ամենաբարձր պատուաստիճանն էր, որը ենթադրում էր նաեւ ամէնամեայ շօշափելի դրամական վարձատրութիւն (Հր. Բարթիկեան, *Հայ-բիւզանդական հետազօտութիւններ*, Եր., 2002, էջ 669):

16 **Գ. Սարգսեան**, *Գրիգոր-Ապիրատ Հասանեան. հիմնադիր Կեչառիսի վանքի* (վիմագրական նոր վկայութիւն), «Հին Հայաստանի մշակոյթը», 12, Եր., 2002, էջ 111. **Կ. Մաթեւոսեան**, *Հազարամեայ Կեչառիսի հիմնադրման պատմութիւնից*,- «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91

17 **Ստեփանոսի Տարօնեցւոյ** *Պատմութիւն*, էջ 276-278

18 **Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ*, յառաջաբանով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 1893, էջ 105:

19 **Լ. Խաչիկեան, Վ. Ցակոբեան**, *Ինչպէս չպէտք է հրատարակուեն պատմական սկզբնաղբիւրները*,- ՀՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի տեղեկագիր, 1949, թիւ 2, էջ 82

20 «ՆԾԹ (1010) թուին Սմբատ Մագիստրոսն շինէ զԲագնայրն տուն Աստուծոյ» (*Մանր ժամանակագրութիւններ. ԺԳ-ԺԸ դդ.*, հտ. 1, կազմեց՝ Վ. Ցակոբեան, Եր., 1951, էջ 25):

21 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխ. Կ. Մելիք Օհանջանեանի, Եր., 1961, էջ 89:

22 **Մխիթարայ Այրիվանեցւոյ** *Պատմութիւն Հայոց*, Մոսկուա, 1860, էջ 57

23 **Կ. Մաթեւոսեան**, *Անի. եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը*, Ս. Էջմիածին, 1997, էջ 350-351

24 **Ղ. Ալիշան**, *Ծիրակ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 113

25 Վահրամի աւագութեան օգտին է խօսում այն, որ նրան կնութեան է տրուել ժամանակի ամենանշանաւոր իշխաններից մէկի դուստրը, որն իր մասին հպարտութեամբ գրում է՝ «...դուստր Մեծին Վասակայ» (**Ղ. Ալիշան**, *նոյն տեղում*): Սեդայից բացի, Վասակ Պահլաւունու այլ դուստր աղբիւրներում չի յիշատակւում: Խնամական կապերի, մասնաւորապէս՝ դուստրերի ամուսնութեան միջոցով այլ իշխանական տոհմերին համախմբելու փորձառութիւն ունեցաւ նաեւ Վասակի աւագ որդին՝ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին, որի երեք դուստրերը նշանաւոր իշխանական ընտանիքներ կազմեցին (**Ն. Ակինեան**, *նշ. աշխ.*, էջ 372-373):

© National Library of Armenia

այլն) եւ հետամուտ էին դրանց բարգաւաճմանը: Մի բան պարզ է, որ վանքի կառուցումից (1010 թ.) մինչեւ Վահրամ իշխանաց իշխանի կնոջ արձանագրութեան ժամանակը (1021-1022 թթ.) այնքան կարճ միջոց է, որ դժուար թէ Սմբատ Մագիստրոսի տոհմի հետ կապ չունեցող մէկ այլ տոհմ այդքան տիրաբար (հանդիսաւոր արձանագրութեամբ) ներկայանար Բագնայրում:

Հնարաւոր է, որ այս ընտանիքի մի շառաւիղի մասին է վկայուած Մատենադարանի թիւ 275 Աւետարանի 1077 թ. յիշատակարանում, համաձայն որի՝ այդ ձեռագիրը գրել է տուել Վահրամի որդի Սմբատ պատրիկը[26]: Գ. Յովսէփեանն, անտեսելով ժամանակի տարբերութիւնը, Սմբատ պատրիկին նոյնացնում է Բագնայրը կառուցող Սմբատ Մագիստրոսի հետ[27]: Սակայն, մեր կարծիքով, Սմբատ պատրիկը զաւակն է վերը նշուած իշխանաց իշխան Վահրամի եւ Սեդայի: Յիշատակարանի սկզբում Սմբատը յիշում է իր պատրոնին, որը Կարսի վերջին թագաւոր Գագիկի դուստր Մարիամն էր, իսկ վերջում գրիչն աւելացնում է. «...զՍմբատ որդի Վահրամայ՝ քրիստոսասէր եւ բարեյաղթող պատրկին յիշեսջիք ի Տէր եւ զծնաւղս իւր եւ եղբարս՝ զննջեցեալսն ի Քրիստոս»[28]: Այստեղից երեւում է, որ այդ ժամանակ Սմբատ պատրիկը բաւական առաջացած տարիքում էր, երբ կորցրել էր ծնողներին ու եղբայրներին: Հնարաւոր է, որ նրա Սմբատ անունը ծագում է իր մեծանուն նախորդի՝ Սմբատ Մագիստրոսի անունից:

Հասկանալի է, որ լիակատար վստահութիւն չենք կարող ունենալ, թէ մեր բոլոր ենթադրութիւնները ճիշտ են: Սակայն առկայ նիւթերը թոյլ են տալիս Սմբատ Մագիստրոսի տոհմածառը կազմելու առաջին փորձը կատարել:

Ամփոփելով նկատենք, որ Բագրատունեաց Հայաստանի իշխանական տների մասին ցայժմ եղած պատկերացումները մեծ մասամբ գտնւում են աւանդական պատմագրութեան ազդեցութեան տակ, ուր զգալիօրէն ուռճացուած է Պահլաւունեաց տոհմի դերը: Կասկածից վեր է, որ այդ տոհմը բացառիկ դիրք ունէր Անիի թագաւորութեան մէջ, սակայն դա չի նշանակում, որ միւս իշխանատոհմերը պէտք է արհեստականօրէն կցուեն Պահլաւունիներին: Ժամանակին այդպէս է եղել Կեչառիսի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի պարագայում, որին մենք անդրադարձել ենք առանձին ուսումնասիրութեամբ[29]: Կարծում ենք, որ Անիի Բագրատունեաց թագաւորութեան պատմութեան մէջ այսուհետեւ իր տեղը պէտք է ունենայ նաեւ Բագնայրի հիմնադիր Սմբատ Մագիստրոսի տոհմը:

26 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., աշխ. Ա. Մաթեւոսեանի, Եր., 1988, էջ 110

27 Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 1951, էջ 254:

28 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 110

29 Կ. Մաթեւոսեան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը ԺԱ դարում,- «Բանբեր Մատենադարանի», Եր., 2008, թիւ 18 (հրատարակութեան ընթացքի մէջ է):





© National Library of Armenia